COURTalks disCOURs
Bringing the Convention closer to home
La Convention à votre porte

Դիմումի ընդունելիությունը [1]

1. Դիմումի ձևաթուղթը և դատարանի կանոնակարգի 47-րդ կանոնը 2
2. Ներպետական միջոցների սպառում և 6 – ամսյա վերջնաժամկետը (Կոնվենցիայի 35 § 1 Հոդված) 2
3. Դատարան դիմելու իրավունքի չարաշահում (Կոնվենցիայի 35 § 3 հոդված) 3
4. Դատարանին կամ այլ միջազգային ատյան ներկայացված դիմում (Կոնվենցիայի 35 § 2 Հոդված) 3
5. Տուժողի կարգավիճակ (Կոնվենցիայի 34 Հոդված) 4
6. Պետության պատասխանատվություն (*Ratione personae*) (Կոնվենցիայի 35 § 3 Հոդված) 4
7. Տարածքային իրավազորություն (*Ratione loci*) (Կոնվենցիայի 35 § 3 Հոդված) 5
8. Ժամանակային իրավազորություն (*Ratione temporis*) (Կոնվենցիայի 35 § 3 Հոդված) 5
9. Գործի բուն առարկան (*Ratione materiae*) (Կոնվենցիայի 35 § 3 Հոդված) 5
10. Ոչ էական վնաս (Կոնվենցիայի 35 § 3 (բ) Հոդված) 6
11. Ակնհայտորեն անհիմն դիմում (Կոնվենցիայի 35 § 3 Հոդված) 6
12. Եզրափակիչ դիտողություններ 7

Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը ստացված դիմումների շուրջ 90 %-ը անընդունելի է համարում: Այս վիճակագրությունը, ինչպես նաև՝ փորձը հստակորեն հավաստում են, որ անհատական դիմողների մեծամասնությունը և շատ իրավախորհրդատուներ դիմումների ընդունելիության չափանիշների ավելի խորացված իմացության կարիք ունեն:

[1] © Եվրոպայի խորհրդի/Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարան, 2015
Այս տեքստի բովանդակությունը պարտավորեցնող բնույթ չի կրում դատարանի համար:

1. Դիմումի ձևաթուղթը և դատարանի կանոնակարգի 47-րդ կանոնը

Որպեսզի ձեր դիմումը Դատարանն ընդունելի համարի նախևառաջ անհրաժեշտ է տրամադրել դիմումի ձևաթղթում պահանջվող բոլոր տեղեկությունները: Դուք պետք է ներառեք դրանում, օրինակ՝ ձեր գործի փաստերի շարադրանքի ամփոփագիրը, լրացնեք իրավունքների խախտման հայտարարագրի մասը և ապահովեք դիմումի ձևաթղթի վերջին էջի ձեր ստորագրությամբ բնօրինակը: Դուք պետք է նաև ներառեք բոլոր հավելյալ փաստաթղթերը, ինչպես օրինակ՝ ներպետական դատարանների որոշումները:

Ձեր դիմումը չպետք է լինի անանուն:

Դուք պարտավոր եք նշել ձեր անունը, որպեսզի ճանաչելի լինեք:

Եթե չեք ցանկանում հրապարակել ձեր ինքնությունը, ապա պետք է նշեք այդ խնդրանքը դիմումի ձևաթղթում կամ ներկայացնեք այն հետագայում՝ առաջին իսկ հնարավորության դեպքում: Դուք պետք է շարադրեք դրա հիմնավորումը և բացատրեք, թե ձեր ինքնության հրապարակումն ինչ ազդեցություն կունենա ձեր համար: Միայն Դատարանն է իրավասու կայացնել այդպիսի որոշում: Եթե ձեզ շնորհվել է անանուն հանդես գալու իրավունք, ապա ձեզ կդիմեն ձեր անվան սկզբնատառերով կամ այլ տառանիշով: Եթե ոչ՝ ձեր անունը կնշվի այն բոլոր փաստաթղթերում, որոնք առցանց հրապարակվում են Դատարանի HUDOC տվյալների բազայում:

Հիշեցնում ենք, որ Դատարանի կանոնակարգի 47 կանոնին առնչվող բոլոր փաստաթղթերը զետեղված են Դատարանի կայքի «Դիմող » խորագրի ներքո2:

2. Ներպետական միջոցների սպառում և 6 – ամսյա վերջնաժամկետը (Կոնվենցիայի 35 § 1 Հոդված)

Անհրաժեշտ է դիմումի լրացված ձևաթուղթն ուղարկել մինչև 6-ամսյա ժամկետի ավարտը: 6-ամսյա ժամկետը դադարում է ընթանալ միայն դիմումի լրացված ձևաթղթի ներկայացման պահից:

Դուք պետք է դիմումի ձևաթուղթը փոստով ուղարկեք 6-ամսյա ժամկետի ընթացքում հնարավորինս շուտ: 6-ամսյա ժամկետը սկսվում է հաշվարկվել ներպետական միջոցների սպառման ընթացքում ներպետական վերջնական որոշման ամսաթվից սկսած: Եթե ներպետական վերջնական որոշման ամսաթիվը հունվարի 20-ն է, դուք դիմումի ձևաթուղթը պետք է ուղարկեք մինչև հուլիսի 20-ի կեսգիշերը: 6-ամսյա ժամկետի վերջին օրը, նույնիսկ եթե այն ոչ աշխատանքային՝ հանգստի կամ տոն օր է, չի տեղափոխվում այլ օր:

Հաշվի առեք, որ թիվ 15 արձանագրության ուժի մեջ մտնելով 6-ամսյա ժամկետը կկրճատվի դառնալով 4-ամսյա ժամկետ:

Ինչ վերաբերում է ներպետական միջոցների սպառման հանգամանքին, ապա դուք պետք է օգտագործեք ներպետական այն բոլոր միջոցները, որոնք կարող են ապահովել ձեր

[2] http://www.echr.coe.int/Pages/home.aspx?p=applicants/hye

խախտված իրավունքների պաշտպանությունը: Որպես կանոն, դա կարող է լինել այն բողոքը, որը ներկայացվում է քաղաքացիական, քրեական կամ ադմինիստրատիվ դատարան, շարունակելով բողոքարկումը ավելի բարձր դատական ատյան: Օրինակ՝ վճռաբեկ կամ սահմանադրական դատարան, եթե այն առկա է:

Դուք պետք է հաշվի առնեք նաև ներպետական օրենսդրության պահանջները: Եթե ձեր բողոքը լուծում չի ստացել ներպետական դատարանի կողմից այն պատճառով, որ դուք բաց եք թողել ներպետական օրենսդրությամբ նախատեսված ժամկետը, ապա ձեր գանգատը Դատարանը կարող է անընդունելի համարել:

Եվ վերջապես՝ Կոնվենցիայի խախտման մասին մեզ ներկայացված ձեր գանգատը պետք է նախապես, ըստ էության, ներկայացված լինի ազգային դատարաններ ներկայացրած ձեր բողոքներում:

3. Դատարան դիմելու իրավունքի չարաշահում (Կոնվենցիայի 35 § 3 հոդված)

Ձեր դիմումը կարող է անընդունելի համարվել Դատարան դիմելու իրավունքի չարաշահման պատճառով:

Սա այն դեպքն է, երբ դուք ապատեղեկացնում եք Դատարանին դիմումն ուղարկելով կեղծ անվամբ կամ կեղծելով որոշ փաստաթղթեր կամ երբ դուք չեք տեղեկացրել Դատարանին ձեր գործին առընչվող այնպիսի կարևոր փաստի մասին, որն էական նշանակություն ունի ձեր գործի քննության համար կամ Դատարանում գործի քննության ընթացքում տեղի ունեցած այնպիսի նոր զարգացման մասին, ինչպիսին է, օրինակ՝ ձեր օգտին ներպետական դատարանի կայացրած վճիռը:

Ձեր դիմումը կարող է անընդունելի համարվել ձեր կողմից վիրավորական արտահայտություն օգտագործելու կամ հաշտության բանակցության գաղտնիությունը խախտելու դեպքում:

4. Դատարանին կամ այլ միջազգային ատյան ներկայացված դիմում (Կոնվենցիայի 35 § 2 Հոդված)

Ձեր դիմումը կարող է անընդունելի համարվել, եթե Դատարանը նախկինում քննել է ձեր ներկայացրած՝ նույն փաստերին և նույն բողոքներին վերաբերող դիմում:

Նույնը վերաբերում է այնպիսի դիմումին, որն էականորեն նույնն է, ինչ այն գործը, որը ներկայացրել եք այլ միջազգային ատյան, օրինակ՝ ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Կոմիտե:

5. Տուժողի կարգավիճակ (Կոնվենցիայի 34 Հոդված)

Դուք կարող եք բողոքարկել միայն այն խախտումը, որից տուժել եք:
Դուք կարող եք լինել անմիջական տուժող այն դեպքերում, երբ, օրինակ՝ դուք բանտում տուժել եք արգելված վերաբերմունքից, ինչը չի ճանաչվել կամ դատապարտվել ներպետական դատարանի կողմից: Կամ եթե դուք չեք ստացել բավարար փոխհատուցում այդ խախտման դիմաց:

Դուք կարող եք լինել նաև անուղղակի տուժող այն դեպքում, երբ, օրինակ՝ անմիջական տուժողը մահանում է նախքան դիմումը Դատարանին ներկայացնելը, և դուք, որպես մերձավոր ազգական, շահագրգռված եք ձեր ազգականի մահվան կամ անհետացման դեպքով իրավական գործընթաց նախաձեռնելու հարցում: Սակայն, եթե ձեր զանգատը բավարար առնչություն չունի մահվան կամ անհետացման հետ, ձեզ տուժողի կարգավիճակ շնորհելը կարող է մերժվել:

Դուք կարող եք լինել պոտենցիալ տուժող այն դեպքերում, երբ, օրինակ՝ դուք օտարերկրացի եք, ում վտարման որոշումն արդեն կայացվել է, սակայն դեռ ի կատար չի ածվել, իսկ այդ կատարումը կարող է հանգեցնել ընդունող պետությունում անմարդկային կամ նսեմացնող վերաբերմունքի կամ խոշտանգումների:

Եվ վերջապես, երբ տուժողը մահանում է Դատարանում գործի վարույթի ընթացքում, և դուք նրա ժառանգը կամ մերձավոր ազգականն եք, ապա կարող եք հանդես գալ նրա փոխարեն դիմողի կարգավիճակում, շարունակելով դատավարությունը՝ Դատարանին հայտնելով ձեր շահագրգռվածության մասին:

6. Պետության պատասխանատվություն (*Ratione personae*) (Կոնվենցիայի 35 § 3 Հոդված)

Ձեր կողմից բողոքարկվող խախտումը պետք է կատարված լինի պատասխանող պետության կողմից կամ որևէ կերպ դրան վերագրելի լինի:

Ձեր դիմումը կարող է անընդունելի համարվել պատասխանող կողմի կապակցությամբ.
- եթե այն ներկայացվել է անհատի դեմ,
- եթե այն ներկայացվել է Կոնվենցիան կամ իր կից Արձանագրությունները չվավերացրած պետության դեմ,
- եթե այն ներկայացվել է Կոնվենցիային չմիացած միջազգային կազմակերպության դեմ, ինչպես օրինակ՝ Եվրոպական Միության հաստատությունները: Այն դեպքում, եթե Ձեր բողոքը ԵՄ անդամ պետության դեմ է, ապա դիմումը կարող է անընդունելի համարվել, եթե այն վերաբերում է դրա կողմից ԵՄ իրավունքի կիրառմանը:

Դուք կարող եք դիմում ներկայացնել, եթե դուք անհատ եք կամ ոչկառավարական կազմակերպություն, օրինակ՝ հասարակական կազմակերպություն կամ մասնավոր ընկերություն: Դուք կարող եք դիմում ներկայացնել անկախ ձեր ազգությունից, ձեր ներգաղթյալի կարգավիճակից կամ ձեր գործունակությունից:

7. Տարածքային իրավազորություն (*Ratione loci*) (Կոնվենցիայի 35 § 3 Հոդված)

Ձեր կողմից բողոքարկվող իրավախախտումը պետք է տեղի ունեցած լինի Կոնվենցիայի անդամ պատասխանող պետության կամ այդ պետության կողմից վերահսկվող տարածքում:

Օրինակ՝ պատասխանող պետությունը կարող է պատասխանատու լինել արտերկրում իր դիվանագիտական և հյուպատոսական անձնակազմի գործողությունների համար՝ դիվանագիտական առաքելության սահմաններում, որտեղ նրանք իշխանություն և վերահսկողություն են իրականացնում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ իրենց պետության վարչական տարածքից դուրս:

8. Ժամանակային իրավազորություն (*Ratione temporis*) (Կոնվենցիայի 35 § 3 Հոդված)

Բողոքարկվող խախտումը պետք է տեղի ունեցած լինի պատասխանող պետության համար Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո:

Ձեր դիմումը կարող է ընդունելի համարվել, եթե այն վերաբերում է շարունակական իրավիճակի, որը թեկուզև սկսել է նախքան Կոնվենցիայի կամ դրա համապատասխան արձանագրության վավերացումը, սակայն շարունակվել է նաև դրանից հետո: Օրինակ՝ մի գործով Դատարանը վճռել էր, որ այն իրավասու է քննել պատասխանող պետության կողմից անհատական դիմումի իրավունքի ճանաչելուց տասներեք տարի առաջ տեղի ունեցած անհետացումների գործը: Իրոք, անհետացումը «ակնթարթային» ակտ կամ իրադարձություն չէ: Հետևաբար, դեպքի կապակցությամբ քննություն իրականացնելու պետության ընթացակարգային պարտականությունը շարունակվում է, քանի դեռ չի պարզվել անհետացած անձի հետ տեղի ունեցածը, նույնիսկ եթե հիմքեր կան ենթադրելու որ նա մահացել է:

9. Գործի բուն առարկան (*Ratione materiae*) (Կոնվենցիայի 35 § 3 Հոդված)

Դուք պետք է վկայակոչեք այն իրավունքը, որը պաշտպանված է Կոնվենցիայով կամ իր կից Արձանագրություններով, ինչպես օրինակ՝ կյանքի իրավունքը կամ վնասի փոխհատուցման իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը: Ձեր դիմումը կարող է մերժվել գործի բուն առարկայի՝ Կոնվենցիայի հետ անհամատեղելիության հիման վրա: Եթե, օրինակ՝ դուք պահանջում եք վարորդական իրավունք ստանալու իրավունք կամ պայմանավորվող պետություններ մուտք գործելու և բնակվելու իրավունք, չլինելով տվյալ պետությունների քաղաքացի :

Ձեր բողոքը պետք է համընկնի ձեր կողմից վկայակոչվող իրավունքի, ինչպես օրինակ՝ արդար դատաքննության իրավունքի, անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի, սեփականության պահպանման իրավունքի կիրառման ոլորտին: Այդպես օրինակ՝

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի շրջանակում արդար դատաքննության երաշխիքները չեն վերաբերում ապաստանի կամ արտաքսման ընթացակարգերին կամ հարկային պարտականությունների ընթացակարգերի մեծամասնությանը:

10. Ոչ էական վնաս (Կոնվենցիայի 35 § 3 (բ) Հոդված)

Ձեր դիմումը կարող է հայտարարվել անընդունելի, եթե դուք էական վնաս չեք կրել:

Դա կարող է լինել երբ ձեր պահանջի ֆինանսական տարրը էական չէ: Օրինակ, եթե դուք բողոքում եք 34 եվրոյի չափով վճռի չկատարման դեմ կամ աշխատավարձի պարտքի դիմաց պահանջում եք 200 եվրո: Իրավունքի խախտումը պետք է հասնի փոխհատուցման պահանջի նվազագույն մակարդակի՝ միջազգային դատարանի կողմից քննարկումը երաշխավորելու համար:

Այսուհանդերձ, այդ չափանիշների շրջանակում կան երկու երաշխիքային դրույթներ. նախ, երբ մարդու իրավունքների պաշտպանությունը պահանջում է ըստ էության քննություն: Այսպես՝ մի գործում, որում վիճարկվող գումարը միայն 17 եվրո էր, Դատարանը որոշեց, որ անհրաժեշտ է սկզբունքային վճիռ, քանի որ սա առաջին դեպքն էր ազգային օրենքի փոփոխությունից հետո:

Երկրորդ երաշխիքային դրույթը պահանջում է, որ ձեր գործը պատշաճ կերպով ուսումնասիրված լինի ներպետական դատարանի կողմից: Այսպես՝ մի դեպքում Դատարանը հայտարարել է 70 եվրոի առնչությամբ դիմումը ընդունելի, քանի որ ներքին օրենսդրությունը չի ապահովում արդյունավետ պաշտպանություն:

Պետք է նկատի ունենալ, որ թիվ 15 Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո երկրորդ երաշխիքային դրույթը կվերացվի:

11. Ակնհայտորեն անհիմն դիմում (Կոնվենցիայի 35 § 3 Հոդված)

Ձեր դիմումը կարող է ակնհայտորեն անհիմն հայտարարվել նույնիսկ այն դեպքում, երբ պաշտոնական թույլատրելիության մինչ այժմ նշված բոլոր չափանիշները բավարարված են: Օրինակ՝ երբ ձեր հայտը չի բացահայտում իրավախախտումը, կամ, եթե կարգավորված կամ տարածված նախադեպային իրավունքը նմանատիպ կամ նույնանման իրավիճակներում ևս չի հայտնաբերել որևէ իրավախախտում:

Ձեր դիմումը կարող է ակնհայտորեն անհիմն լինել, եթե դուք չեք տրամադրել ձեր կողմից բարձրացված փաստերին և իրավական փաստարկներին աջակցող բավարար ապացույցներ: Օրինակ՝ եթե դուք չեք կարող բացատրել, թե ինչու է խախտվել ձեր կողմից վկայակոչված Կոնվենցիաի հոդվածը:

Ձեր դիմումը կարող է հայտարարվել անընդունելի, երբ այն այնքան խառն է շարադրված, որ դատարանի կողմից օբյեկտիվորեն անհնար է իմաստային պատճառաբանություն տալ ձեր բողոքներին: Նույնը վերաբերում է նաև բոլոր արհեստական բողոքներին, որոնք հստակ հորինված են կամ որոնք ակնհայտորեն հակասում են ողջախոհությանը:

Եվ, վերջապես, Ստրասբուրգի դատարանը «չորրորդ ատյանի» դատարան չէ, ոչ էլ վերաքննիչ, վերանայող կամ վճռաբեկ դատարան: Այն չի կարող կասկածի տակ դնել ձեր գործում ներպետական դատարանների կողմից փաստերի հիմնավորումը, նաև՝ նրանց կողմից փաստերի գնահատումը կամ ներպետական օրենսդրության կիրառումը, նաև՝ քրեական գործում ձեր մեղավորությունը կամ անմեղությունը:

12. Եզրափակիչ դիտողություններ

Ի եզրափակումն, գործերի վարույթը Ստրասբուրգի Դատարանում անվճար է: Դուք, գոնե նախնական փուլերում, փաստաբանի կողմից ներկայացվելու կարիք չունեք, և ձեր դիմումը կարող եք ներկայացնել անդամ պետություններից որևէ մեկի լեզվով:

Նկատի ունեցեք, որ ձեր դիմումը անընդունելի ճանաչելու դեմ բողոքարկման կարգ գոյություն չունի: Եթե ձեր գործը հստակորեն անընդունելի է, Դատարանը ձեզ այդ մասին գրավոր կտեղեկացնի սահմանված ժամկետում: Եթե ձեր դիմումը ընդունելի է, Դատարանը այնուհետև կորոշի թե Կոնվենցիայով սահմանված ձեր իրավունքները արդյոք խախտվե՞լ են:

Դատարանի որոշումները եւ վճիռները մեծամասամբ հրապարակված են իր HUDOC տվյալների բազայում:3

Ձեր դիմումը Դատարանի կողմից ընդունելի համարվելու լավագույն հնարավորություններ ունենալու համար խնդրում ենք հաշվի առնել ընդունելիության բոլոր նշված չափանիշները: Ինչպես նաև՝ մի հապաղեք ստուգել դատարանի HUDOC տվյալների բազան, դատարանի կայքը, ինչպես նաև՝ դատարանի կողմից հրատարակվաղ այլ հրապարակումները, օրինակ՝ ընդունելիության չափանիշների ուղեցույցը,4 որը դուք կարող եք գտնել Դատարանի կայքում:

[3] http://hudoc.echr.coe.int/
[4] http://www.echr.coe.int/Documents/Admissibility_guide_HYE.pdf